

շանային բուժարկի երբ իրենց ներկայացուէր ան-
զեկագիրները:

Տես այսու Պալաքեան նպիտակոյս կարգաց իր
ճառը եւ եզրակացուց հետեւեալ կերպով. 1914-1918
համաշխարհային պատերազմի արեան ջրհեղեղին
վաղորդային Լոզանի այս վերնատան մէջ մեր հա-
մաշխարհային ժողովը թող ըլլայ նոր պենտէկոստէ
մը եւ մենք սիրոյ եւ խաղաղութեան աւախը առ-
նինք մեր երկիրներն եւ եկեղեցիները:

Կազմուեցաւ գործադիր Յանձնաժողով մը (Con-
tinuation Committee) 35 անդամներէ, զիս եւ Գրի-
գորիս եպօ. անգամ եւս ընտրեցին նոյն Յանձնաժո-
ղովին: Իրաւունք տրուեցաւ գործադիրին որպէսզի
եթէ կարելու եւ իմաստուն կը նկատէ, մեռ Խա-
նէ միջոցներ յառաջիկային համաժողովին զամար-
ման ի նպատակ քրիստոնէական միութեան:

Համաժողովին խորհրդակցութեանց եզրակացու-
թիւնները պիտի դիմելն թուր եկեղեցեաց պաշտո-
նական ճանապարհաւ եւ պիտի խնդրուի եկեղեցի-
ներէ որպէսզի տեղեկագիր դրկեն իրենց խորհրդակ-
ցութեանց վրայ, ուրիշ վերջ գործադիր յանձնաժո-
ղովը պիտի ուսումնասիրէ միջոցներ մեռնարկելու
նման նոր համաշխարհային համաժողովի մը հա-
մար: Մասնակցող եկեղեցիներէ խնդրել որ շարու-
նակին պահել իրենց ներկայացուցիչները: Ջանքեր
պիտի ի գործ դրուին պիտե՛կ մը տարեկան 20,000
տոլարի, որպէսզի վճարուի ծախքերը գործադիրի
աշխատութեանց: Գործադիրը պիտի զբաղի լրացու-
ցիչ մանրամասնութիւններով:

Ն Ի Ս Ա Ռ .

19 Յոգոստոս 1927. Ուրբ.

Նախագահը ներկայացուց համաժողովին վեց
տեղեկագիրներէ եզրակացուած նախաշաւիկ (preau-
bule) մը, որ նպատակ ունի ամփոփելու կատարե-
ալ ծրագիրը եւ նպատակը համաժողովին եւ հաս-
տատելու եկեղեցեանց միութեան շարժումին ապա-
գան. այս նախադասարանական բնագիրը համա-
ժողովէն ընդունուեցաւ:

Փ ա կ ու մ Ե Հ ա մ ա ժ ո ղ ո Վ ի

Փոխ նախագահ Dr. Garvie շնորհակալութիւն
յայտնեց համաժողովին որ դիւրացուց ժողովը զե-
կավարկելու իր պաշտօնը. «Շնորհակալ եմ Աստուծոյ
որ շատ զժուարթութեանց մէջ իրարու առաջնորդե-
ցինք եւ իրարու օգնեցինք, եւ փութորկինք վերջ
հասանք նաւահանգիստ. կը յուսամ որ այս նաւա-
հանգիստը պիտի ըլլայ սկզբանիկէս մը յաջորդ ծառ-
բորդութեան: Այս առթիւ չեմ կրնար չգնահատել
այն թիւադրութիւններն զոր կիրառման պահուս ըս-
տացած եմ այնքան ծանր պատասխանատուութիւն-
ներով ընկճուած Brent եպիսկոպոսէ:

Համաժողովի նախագահ Brent եպիսկոպոսը հե-
տեւեալը իրօսեցաւ.

«Եղբայրներ, նաւապետ Garvie առաջնորդեց
բերաւ նաւը անվտանգ նաւահանգիստը, անիկա շատ
ճարտարօրէն վարեց նաւը եւ անոր համար կոչեցի
զինքը քանձէրանաի նաւահանգիստը:

«Մեծապէս շնորհապարտ եմ իրեն եւ զգացում-

ներս է որ կը յայտնեմ. չեմ կարծեր որ կարենամ
աւելցնել աւելի ուրիշ բան մը բացի վատահոգներէ
թէ կը յուսամ յառաջիկային կողմ կողքի կրկին կա-
րենանք գործել:»

Ապա շնորհակալութիւն յայտնեց ժողովականաց
որ իրենց պարտականութիւնը լիովին կատարեցին.
«Իրենց աշխատութեան արդիւնքը հոս չէ որ պիտի
տեսնեն այլ հետգնեալ իրենց տեղւոյն մէջ է որ պի-
տի զգան եւ տեսնեն: Ըստ էւ յետոյ աւելցուց. «Է-
սի թէ Տօրթ. Կարփի առաջնորդեց նաւահանգիստ
նաւը. բայց աւելիա վերջին նաւահանգիստը չէ.
մենք ըրինք պատրաստութիւն մը նոր ճամբորդու-
թեան եւ անշուշտ ամէն որ այնքան պատրաստա-
կամութեամբ պիտի հաւաքէ իր ուժերը մասնակցելու
այդ նոր ճամբորդութեան որ պէտք չէ ուշանայ:»

Պրէնզ եպօ. հրաւիրեց ժողովականները որ եր-
գեն երգարանի 14 թիւ երգը, եւ ապա զգացուն շնչ-
տեղով աղօթեց եկեղեցեաց միութեան եւ աշխարհի
խաղաղութեան համար եւ արձակեց համաժողովը իր
օրհնութեամբ:

ՎԵՐՋ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ազգային աղէտէն խոցոտուած սրտիս
համար բաշտան մ'եղաւ վերածնունդը
Սիւնի, որով հանճարեղ Պատրիարք մը,
կորովամիտ խմբադրապետ մը եւ ներհուն
աշխատակիցներ լոյս ու յոյս կը ծառայեն
հայ ժողովուրդին մէջ: Սիւն, ամուր աշ-
տարակ մը դարձած, ներքին ու արտա-
քին յարձակումներու զէմ կը պաշտպանէ
Հայ եկեղեցին, որ, մանաւանդ մեր քա-
ղաքական կեանքին կորուստէն ի վեր,
միակ ազգային հեղինակութիւնը հանդի-
սացաւ, Հայութեան մարմինն ոգնայալը,
հայկական շէնքին կեդրոնական սիւնը:

Սիւնը նշանաւոր է նաեւ իր պատմական
ճշգրտութեամբ: Ազնաւիտ ուսումնասիրու-
թեամբ կը վերաքննէ հին պատմութիւնը,
աչքի լոյս կ'սպառէ փոշոտ մազազաթիւնե-
րու եւ ցեցակեր թուղթերու վրայ, եւ եր-
կիրդածութեամբ կ'արձանագրէ ժամանա-
կակից պատմութեան դրուադները: Թո՛ղ իր
ըջութեանէն օրինակ տեսնեն մեր այն զրիշ-
ները, որոնք կը խեղաթիւրեն մեր աչքերուն
առջեւ կատարուած իրողութիւնները եւ կը
ստեղծեն ժամանակակից պատմութիւն մը
որ գոյութիւն չէ ունեցած եւ կրնայ ապա-

դայ պատմիչները մոլորեցունելու ծառայել:

Օրինակ մը տալու համար, պիտի ըսեմ թէ Պ. Արշակ Ալպոյաճեան իր վերջին զըրքին մէջ յայտարարած է թէ Ֆռանսայի արտաքին գործերու նախարարը, Տէլզասէ, զիս գործածած է, Լոսանտօի ու Գուպինիի «պահանջները արդարացնելու և մարդասիրական զիմակին տակ իրենց նիւթական յափշտակութիւնը ոտաջ տանելու համար»: Որքա՛ն սխալ: Տէլզասէ մտքէն անգամ չանցուց գործածել զիս: Ես փորձեցի գործածել զայն, ի նպատակ հայկական խնդրին ճշուժ բանեցունել տալու համար Ապտիւլ-Համիտի վրայ, որու դէմ զրկած էր ֆռանսական տորմիլը նոյն միջոցին: Տէլզասէ, նախկին ուսուցիչ որ զիւանապէտ դարձած էր, մերժեց «մարդասիրական զիմակին տակ» մտնել, անժամանակ զտնելով հայկական խնդրի յարուցանել. այսինքն Պ. Ալպոյաճեանին գրածին ճիշդ հակառակը տեղի ունեցաւ:

Արիւ ազգային մը, Պ. Տիգրան Տօգրամաճեան, մի քանի ամիս առաջ ժամանակի մէջ (1927 Մայիս 13, Ուրբ.) հրատարակեց թէ Ներսէս Պատրիարքը Շիրակօի Կրօնաժողովին զրկած էր Միւլքիսիզիկ վարդապետ Մուրատեանը, 100 սակի ճամբու ծախք վճարելով, և թէ Մուրատեան «կը խնդրէ ժողովէն որ պայմանաժամը երկարի, որպէս զի ինք ալ ո՛չ միայն խօսել, այլև խօսուած վարդապետութիւններուն հակիրճ պատասխաններ տայ: Համագումարը կ'ընդունի առաջարկը և երկու օր ու մէկ զիշեր կ'ունկնդրէ Հայոց պատուիրակին: Ամէնքն ալ զո՛հ կը մեան ու շնորհակալութիւն կը յայտնեն»:

Ներսէս Պատրիարքը 1884 ին վախճանած ըլլալով, չէր կարող պատուիրակի զրկել Շիրակօի Կրօնաժողովին, որ զօմարուեցաւ 1893 ին, Ալեքեան Պատրիարքի օրով: Ապտիւլ Համիտ, որ մերժած էր մահմետական պատուիրակի մը զրկել այս ժողովին, Ալեքեանին ալ արգիլեց ներկայացուցիչ զրկել: Գալով Մուրատեանին, որ իբր թէ 100 սակի ճամբու ծախք առած և երկու օր ու մէկ զիշեր ճառ խօսած է Շիրակօի մէջ, կեանքին մէջ ոտք չէ կոխած Ամերիկա: Կրօնաժողովը կազմակերպող ա-

մերիկեան յանձնախումբը զի՛ս էր որ հրախիւց Լոնտօնէն, Ալեքեանի մերժողական պատասխանէն յետոյ, և ես պատու ունեցայ ճառել մեր ազգային եկեղեցիին վրայ:

Պ. Տօգրամաճեան, ճարտար գրաւարապետ ու ազգասէր Հայ, որոյ յիշգուծիւնը ծերացած կ'երեի, ուրիշ պատմական սխալ մ'ալ գործած էր, հրատարակելով թէ Միւլքիսիւ Փորթուգալեան ներկայացած է մեծ-եպարքոս Ալի Փաշային. մինչ ներկայացողն էր Փորթուգալ Օզլու Միհրան, ինչպէս որ ճշգրտ էմ Կոնստնթին մէջ:

Երբ մենք մեր ժամանակակից պատմութիւնը խեղաթիւրեմք, անկլիմէջ ձգած չե՛նք ըլլար ազգայն պատմագիրները: Ասոնք իրաւունք պիտի ունենան ըսել մեր համբալ պատմիչներուն համար՝ «Եթէ չզիտէին խօսել, լռե՛լ ալ չզիտէին»:

Մարտիկ

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ա.

Պապական նուիրապետական յօրինուածութիւնն ունի յայժմուս 65 Կարգիւնալ (յորոց միջի 39 Իտալացիք են), 6 Պատրիարքութիւններ, 1164 Եպիսկոպոսական և Արքեպիսկոպոսական աթոռներ (ըստ նորագոյն լրոց ի մօտոյ 5 նոր Եպիսկոպոսական վիճակ հաստատելու զիտաւորութիւն կայ, որով Եպիսկ. Աթոռոց թիւն 1169 ի պիտի բարձրանայ), 242 Առաքելական Տեղակալութիւններ, 92 Առաքելական Վերակայութիւններ, քանի մի Արքայութիւններ՝ որք և ո՛չ մի թեմի են թարկեալ են: — Պապ, 29 տէրութեանց մօտ փոխանորդներ կարգած է, իսկ իւր մօտ 27 տէրութիւնք ներկայացուցիչներ ունին: